

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ԳԵՂԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ  
ԾՐԱԳԻՐ**

Կազմել է՝ համայնքի ղեկավար ՍՍԲԱՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ-----

Հաստատվել է՝ համայնքի ավագանու-----թիվ-----

(Նիստի ամսաթիվը)

ԳԵՂԱԶՈՐ 2016թ.

## **1. Ներածություն**

Հարգելի ընթերցող՝ Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Արագածոտն մարզի Գեղաձոր համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, որը մշակվել է հիմք ընդունելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքով սահմանված լիազորությունները և իրավասությունները :

ՀՀԶԾ մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել համայնքի ֆինանսական կարողությունը, համայնքում առկա զարգացման դրական միտումները, ինչպես նաև համայնքում առկա խնդիրները և վտանգները:

Մեր նպատակն է համայնքը բարձրացնել բնակչության կենսամակարդակը, դարձնել համայնքի բնակիչների կյանքն ավելի բարեկեցիկ , համայնքում զարգացնել անասնապահությունը՝ տարեցտարի ավելացնելով անասնազիլաքանակը , կաթի և մսի քանակի և որակի բարձրացումը : Միաժամանակ համայնքի զարգացման և առաջընթացի համար գերակա խնդիր է հանդիսանում համայնքում արտագնա աշխատանքի բարձր ցուցանիշը , մանկապարտեզի և մանկական զբոսայգու բացակայությունը , համայնքում տիրող պասիվ մշակութային կյանքը , փողոցների մասնակի լուսավորությունը :

Հիմնական խնդիրներից կարելի է նշել նաև համայնքի ճանապարհների անմխիթար վիճակը

Համայնքի զարգացման համար մեծ խոչընդոտ է նաև գազաֆիկացման բացակայությունը , ինչը բազմաթիվ դժվարություններ է ստեղծում բնակիչների համար :

Վերը նշված խնդիրների արդյունքում խոչընդոտներ են առաջանում համայնքի սոցիալ – տնտեսական վիճակի բարելավմանը, բնակչության բնական աճի, կենսամակարդակի , մշակութային կյանքի զարգացման հարցերում:

Հաշվի առնելով այն փաստը , որ համայնքը փոքր է իր բնակչությամբ և ֆինանսական կարողություններով , որի արդյունքում համայնքը իր միջոցներով ի վիճակի չէ իրականացնել իրեն վերապահված լիազորությունները ամբողջ ծավալով, որի պատճառով համայնքի զարգացման նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է համախմբվածություն, հետևողականություն, ֆինանսական և ռեսուրսային միջոցների ճիշտ և արդյունավետ օգտագործում՝ ինչն էլ կհանգեցնի համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը :

*Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը մշակելիս հատուկ ուշադրություն է դարձվել ,որպեսզի այն համահունչ լինի ՀՀ ռազմավարական , մարզային և տարածաշրջանային գործողության մեջ դրված զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ կառավարման մարմինների ,քաղաքացիական հասարակության և առանձին կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնումով՝ ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցությամբ , դրանց լուծումներին հասնելու համար:*

## **Գեղաձոր համայնքի ղեկավար Ս.Պետրոսյան**

### **2.Հ.ԶԾ կառուցվածքը**

#### **2.1 Համայնքի իրավիճակի նկարագրություն**


##### **2.1.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն**

Գեղաձոր համայնքը գտնվում է Արագածոտնի մարզի Արագածի տարածաշրջանում ,Արագած լեռան ստորոտին,Գեղաձոր գետակի հովտում: Դիմացից երևում է բիրլիական քառազագաթ Արագածը, որտեղից բացվում է հիասքանչ տեսարան : Համայնքը մարզկենտրոնից գտնվում է 55կմ հեռավորության վրա : Ծովի մակարդակից 2190մ բարձրության վրա է:Սահմանակից է Բերքառատ,Ծաղկահովիտ,Հնաբերդ և Սադունց համայնքներին:Կլիման ցուրտ լեռնային է ,ձմեռները սևական են ,հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են համեմատաբար խոնավ: Հուլիսային միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18-ի սահմաններում :Մթնոլորտային տեղումների քանակը 450-600մմ է:Բնական լանդշաֆտները սևահողային տափաստաններ են:Մշակում են հացահատիկ,բանջարաբոստանային կուլտուրաներ կաղամբ,կարտոֆիլ,ճակնդեղ:Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ:

2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ հիմնական բնակչությունը կազմում է 1240 մարդ, ժամանակավոր հաշվառված են 71 հոգի: Բնակչությունը ըստ սեռատարիքային կազմի հետևյալն է՝

- Մինչև 6 տարեկան----- 83 մարդ, որից՝ 43 իգական, 40 արական
- 6-ից մինչև 18 տարեկան----- 339 մարդ, որից՝ 163 իգական 176 արական

- 19-ից մինչև 63 տարեկան 668 մարդ, որից՝ 340 իգական, 328 արական
- 63 և ավելի տարիքի 150 մարդ, որից՝ 86 իգական, 64 արական



Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և բանջարաբուծությամբ :

Համայնքն ունի մշակույթի տուն և միջնակարգ դպրոց՝ որում սովորում են 134 աշակերտ: Դպրոցի աշխատակազմը՝ 34 աշխատակից, այդ թվում՝ 27 մանկավարժ:

### 2.1.1 Համայնքի սոցիալ -տնտեսական իրավիճակը

Գեղաձոր համայնքի ընդհանուր փարեկան բյուջեն կազմում է 29179.0 հազ դրամ: Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտներ կազմում են 7525.8 հազ դրամ, կամ ընդհանուր փարեկան եկամուտների 25.8% -ը:

Համայնքի փարածքում արդյունաբերական ձեռնարկությունները չկան: Համայնքում գրացված և գործում են թվով երկու փոփոխվարող սյուբեկտներ , որոնք իրականացնում են առևտրային գործունեություն՝ հիմնականում առաջին անհրաժեշտության սպառման ապրանքների վաճառք: , Համայնքի բնակիչները հիմնական զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ, մասնավորապես՝ ցորենի , գարու ,կաղամբի ,ճակնդեղի և կարտոֆիլի մշակությամբ : Ցորենի և գարու տարեկան միջին բերքատվությունը կազմում է համապատասխանաբար 20g և 10g:

Համայնքում առկա է պատմա-մշակութային հուշարձան՝ հիմնադրված 1980թ-ին նվիրված երկրորդ համաշխարհային պատերազմի զոհերի հիշատակին :Համայնքն ունի նախակրթարան (գործում է մեկ խումբ – 12 երեխա), մշակույթի տուն և միջնակարգ դպրոց նախատեսված 394 աշակերտի համար՝ որում սովորում են 134 աշակերտ:

Համայնքը ունի առողջապահական հիմնարկ՝ բուժ կետ: Համայնքապետարանի շենքի տարածքից համայնքապետի որոշմամբ 16 քմ հատկացվել է համայնքի բնակիչներին համապատասխան ծառայություն մատուցելու համար: Այցելուների թիվը տարվա ընթացքում կազմում է 1868 մարդ:

Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքների թիվը 2016 թվականի համար կազմել է 56 ընտանիք

Գործազրկության մակարդակը կազմում է :

### **2.1.3. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերի ու միջոցառումներ**

Համայնք-պետություն համագործակցության շրջանակներում ՀՀ ԳՆ կից ԾԻԳ-ի կողմից գալիք հինգ տարիների համար նախատեսվում է գյուղատնտեսական տարբեր միջոցառումներ, հարևան համայնքների հետ համատեղ իրականացվում են միջհամայնքային ճանապարհների մաքրման, պահպանման աշխատանքները, նախատեսվում է միջհամայնքային ճանապարհների ասֆալտապատում , ինչպես նաև համայնքի ամբողջ տարածքն ապահովվել գիշերային լուսավորությամբ : Միջազգային և դոնոր կազմակերպություններից համագործակցության շրջանակներում նաև նախատեսվում իրականացնել գյուղի եկեղեցու վերանորոգման ծրագիրը: Համայնքի բնակիչների ,մասնավորապես երեխաների հետաքրքրությունների շրջանակն ավելացնելու ընդհանուր կրթվածության մակարդակը բարձրացնելու համար նախատեսվում են սպորտային ,պարային խմբակների բացում,ինչպես նաև համագործակցություն երգ-երաժշտության բնագավառում միջոցառումներ,մրցույթներ իրականացնող հիմնադրամների հետ,մասնավորապես «Զվարթնոց վերածննդի հիմնադրամ»-ի հետ:

Համայնքի տարածքում իրականացվելու են հետևյալ ծրագրերն ու միջոցառումները՝

- միջհամայնքային ճանապարհների մաքրման, պահպանման ծրագրեր
- եկեղեցու վերանորոգում
- միջհամայնքային ճանապարհների ասֆալտապատում
- եկեղեցու վերանորոգման ծրագիր
- սպորտային ,պարային խմբակների բացում

**2.1.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծություն, գնահատական և կանխատեսում**

*համայնքի բյուջեն (եկամտային և ծախսային մասերով),*

Գեղաձոր համայնքի կողմից 2017-2021թթ-ի համար նախատեսվել է եկամուտների հետևյալ բյուջետային կառուցվածքը:

<i>Անվանումը</i>	<i>2017թ</i>	<i>2018թ</i>	<i>2019թ</i>	<i>2020թ</i>	<i>2021թ</i>
<u>ՀՈՂԻ ՀԱՐԿ</u>	3666.1	3666.1	3666.1	3666.1	3666.1
<u>ԳՈՒՅՔԱՅԱՐԿ ՇԵՆՔԵՐ- ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ</u>	34.9	34.9	34.9	34.9	34.9
<u>ԳՈՒՅՔԱՅԱՐԿ ՓՈՒՆԱԴՐԱՄԻՋ ՀԱՄԱՐ (ՖԻԶ.ԱՆՁ.)</u>	2300.8	2400	2500	2700	3000
<u>ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՅՈՒՄՆԵՐԻ ԽՄԻՉՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ</u>	24	24	24	24	24
<u>ՊԵՏ.Բ-ԻՑ ՖԻՆ. ՀԱՄԱՅԱՐԹ. ՍԿԶԲ- ՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԿ. ԴՈՏԱՑ-ՆԵՐ</u>	21530.8	21530.8	21530.8	21530.8	21530.8
<u>ՀԱՄ. ՍԵՓ. ՀԱՄԱՐԿՈՂ ՀՈՂԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ</u>	1000	1000	1000	1000	1000
<u>ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓ. ՀԱՄԱՐԿՈՂ ՀՈՂԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ</u>	500,0	500,0	500,0	500,0	500,0
<i>Ընդամենը</i>	<i>29056.6</i>	<i>29155.8</i>	<i>29255.8</i>	<i>29455.8</i>	<i>29755.8</i>

Գեղաձոր համայնքի կողմից 2017-2021թթ-ի համար նախատեսվել է հետևյալ բյուջետային ծախսային ուղղությունները

<i>Անվանումը</i>	<i>2017թ</i>	<i>2018թ</i>	<i>2019թ</i>	<i>2020թ</i>	<i>2021թ</i>
<b>Ապարատի պահպանում</b>	<i>18660</i>	<i>19000.0</i>	<i>19300.0</i>	<i>19500.0</i>	<i>19600.0</i>
<b>Գրադարան</b>	<i>884</i>	<i>900</i>	<i>900</i>	<i>900</i>	<i>900</i>
<b>Մշակույթի տուն</b>	<i>2652</i>	<i>3100</i>	<i>3300</i>	<i>3600</i>	<i>3800</i>
<b>Շրջակա միջավայրի աղբահ.պաշտպանություն</b>	<i>100</i>	<i>100</i>	<i>300</i>	<i>400</i>	<i>400</i>
<b>Զրամատակարարում և կոյուղի</b>	<i>1000</i>	<i>1000</i>	<i>1000</i>	<i>1000</i>	<i>1100.0</i>
<b>Սոցիալական հատուկ արտոնություններ</b>	<i>1700.0</i>	<i>1800.0</i>	<i>1850.0</i>	<i>1900.0</i>	<i>2000.0</i>
<b>Փողոցների լուսավորում</b>	<i>400</i>	<i>500</i>	<i>550</i>	<i>600</i>	<i>600</i>
<b>Ընդ. բնյթի ծառայութ.</b>	<i>1390</i>	<i>1400</i>	<i>1700</i>	<i>1700</i>	<i>1800</i>
<b>Ճանապարհային տրանսպորտ</b>	<i>1500</i>	<i>3000</i>	<i>5000</i>	<i>5100</i>	<i>5500</i>
<b>Նախադպրոցական կրթություն</b>	<i>770.6</i>	<i>2000</i>	<i>2100</i>	<i>2200</i>	<i>2300</i>
<b><i>Ընդամենը</i></b>	<b><i>29056.6</i></b>	<b><i>32800</i></b>	<b><i>36000</i></b>	<b><i>36900</i></b>	<b><i>38000</i></b>

### **2.1.5 Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը խոչընդոտող գործոններ**

Գեղաձոր համայնքի առջև ծառայած հիմնական խնդիրներն են՝ ոռոգման համակարգը , փողոցների մասնակի գիշերային լուսավորվածությունը, ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման բացակայությունը, դաշտամիջյան ճանապարհների անմխիթար վիճակը : Համայնքի բնակիչների համար խնդիր է մանկապարտեզի բացակայությունը ,որը խոճընդոտում և դժվարացնում է համայնքի երեխաների՝ հասարակության մեջ հեշտ ինտեգրմանը , անհատի ճիշտ ձևավորմանը :

Համայնքի առաջնահերթ խնդիրներից է համայնքը ամբողջովին գազաֆիկացնելը: Համայնքում այսօր չկա գազաֆիկացում, գյուղացին օգտվում է հեղուկ գազից՝ գազաբալոններից և էլեկտ.էներգիայից , որը ազդում է բնակչի սոցիալական վիճակի վրա:

Ոռոգման համակարգի նորոգումը, ինչպես նաև ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների բարելավումը կնպաստի գյուղացու գյուղատնտեսական աշխատանքների հեշտացմանը, արդյունավետությանը:

## 2.1.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն

### Համայնքի ուժեղ կողմերն են՝

- աշխատուժի առկայությունը
- համայնքի աշխարհագրական դիրքը, որը գտնվում է ծովի մակարդակից 2100մ բարձրության վրա, շրջապատված է բարձր լեռներով, որի հաշվին համայնքը գրեթե ամբողջությամբ ապահովված է խմելու ջրով
- նախկին շրջկենտրոնին՝ Ծաղկահովիտին մոտ գտնվելը, այնպես էն կենտրոնացված զանազան ծառայությունների մատուցման կենտրոններ /բանկ, կապի օպերատոր, կոշկակար, վարսավիր, բժիշկ/ :

### • Համայնքի թույլ կողմերն են՝

- Համայնքում չկա գազաֆիկացում
- Արտագնա աշխատատեղերի բարձր ցուցանիշը
- Գործազրկության բարձր մակարդակ
- Մարզկենտրոնից հեռու գտնվելը
- Սպորտային հրապարակներ չունենալը
- Բնակլիմայական խիստ պայմանները

### • Հնարավորություններն են՝

- Մեծ թվով աշխատուժի առկայությունը
- Գյուղատնտեսության և ծավալների ընդլայնումը

### • Սպառնալիքներն են՝

- Բնակճության սոցիալ-տնտեսական վատ վիճակը, որը կհանգեցնի գործազրկության և արտագաղթի մակարդակի բարձրացման
- Ոռոգման համակարգի բացակայությունը
- Կարկտահարության սպառնալիքը
- Հորդառատ անձրևների պատճառով հացահատիկային կուլտուրաների ցածր բերքատվության վտանգը:



## **2.2. Համայնքի նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում**

### **2.2.1. Համայնքի զարգացման հեռահար նպատակի (տեսլականի) սահմանում**

Համայնքը դարձնել կաթ-կաթնամթերքի արտադրության և վերամշակման տարածաշրջանային կենտրոն, համայնքում տիրի կարգ ու կանոն, մաքրություն , ապահովված բնակչության համար բավարար կենսապայմաններով: Գեղաձոր համայնքի ՀՀԶԾ-ի իրականացման արդյունքում , առաջիկա հինգ տարիների ընթացքում կբարելավվի համայնքի բնակիչների սոցիալ –տնտեսական վիճակը ,բնակչությունը կունենա իր ներդրումը ինչպես համայնքի զարգացման համար, այնպես էլ խթան կհանդիսանա պետության առաջընթացի համար, կբարձրանա բնակչության կուլտուր – կենցաղային պայմանները, արդյունքում բնակչությունը կմասնակցի համայնքի մշակութային կյանքի զարգացմանը ,ինչպես նաև նախատեսված ծրագրերի օգնությամբ կկրճատվի արտագաղթի ծավալները, բնակիչները ը ավելի շատ կկապվեն հայրենի հողի հետ և կշենացնեն հայրենի օջախները : Զբաղվածության տարածքային կենտրոնի հետ ակտիվ համագործակցության արդյունքում կառաջանան համայնքի գործազուրկներին մասնագիտական որակավորման և աշխատանքի տեղավորման նոր հեռանկարներ: Գեղաձոր համայնքի աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը կազմում է 17.4 տոկոս ,ինչը կապված է աշխատատեղերի բացակայության հետ: Նշված խնդիրների կարգավորման ընթացքում այն կարող է նվազել ` հասնելով մինչև 9 տոկոս:

Առաջիկա տարիների ընթացքում կավելանա նաև անասնազվաքանակը ` կապված խնդիրների կարգավորման արդյունավետությունից, խոտհարքների և արոտավայրերի նպատակային օգտագործումից :

Համայնքում բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և աշխատանքային պայմանների բարելավման արդյունքում կբարձրանա ներգաղթի ցուցանիշը:

### **2.2.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակների սահմանում**

- Գազաֆիկացում
- Փողոցների ամբողջական լուսավորություն
- Ասֆալտապատում
- Անասնապահության աճ
- Կաթ-կաթնամթերքի վերամշակման արտադրամաս
- Նոր աշխատատեղեր

- Կրթական մակարդակի բարձրացում
- Ակտիվ մշակութային կյանք
- Մանկապարտեզ
- համայնքի բնակչության կենցաղային պայմանների բարելավում

### **2.2.3. ՀՀԶԾ հեռահար նպատակը (տեսլականը) և անմիջական նպատակներն ապահովող ծրագրերի նկարագրություն**

Միջազգային և դոնոր կազմակերպություններից համագործակցության շրջանակներում համայնքը ակնկալում է ոռոգման համակարգի վերանորոգում և բարելավում, համայնքում գազաֆիկացման ծրագրի իրականացում ,մանկապարտեզի համար նախատեսված տարածքի վերանորոգում և մանկապարտեզի բացում ,մանկական զբոսայգու ստեղծում : Համայնքի վարչական տարածքում մասնավոր անձանց և ընկերությունների կողմից նախատեսվում է ներդնել գյուղ.մթերքի արտադրանքի(կաթ-կաթնամթերքի վերամշակման արտադրամասեր: Պետության հետ համագործակցության շրջանակներում՝ ՀՀ ԳՆ կից ԾԻԳ-ի կողմից գյուղ.տեխնիկայի ձեռքբերման ծրագրերը էականորեն դրական ազդեցություն կարող են ունենալ հողատարածքների արդյունավետ մշակման, որն էլ կարող է բերել անասնազլխի քանակի ,ինչպես նաև հացահատիկային կուլտուրաների մշակության ծավալների ավելացմանը: Զբաղվածության տարածքային կենտրոնի միջոցով գործազուրկների համար ժամանակակից և պահանջված արհեստների և մասնագիտությունների ուսուցման,դասընթացների կազմակերպում:

### **2.3. ՀՀԶԾ ֆինանսավորում**

*ՀՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերն ֆինանսավորվելու են հետևյալ միջոցներով՝*

- Համայնքի սեփական եկամուտներ,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներ
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ,
- Բարեգործություն/նվիրատվություն,
- Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում մասնավոր ընկերությունների կողմից արված ներդրումներ,
- Այլ աղբյուրներ:



